## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

### Հանրակրթական բնագավառի օրենսդրություն – 10 ժամ

| | Թեմաները | Բովանդակությունը, ենթաթեմաները: | Ժամաքանակը՝ ըստ պարապմունքների տեսակի | | Թեմայի նպատակը |
|---|---|---|---|---|---|
| | | | Տեսական | Գործնական | |
| 1. | Հանրակրթական ուսումնայան հաստատությունում կրթական գործընթացի մասնակիցների իրավունքների և պարտականությունների ներկայացում – 3 ժամ | Սովորողի իրավունքները և պարտականությունները:<br>Մանկավարժական աշխատողի իրավունքներն ու պարտականությունները:<br>Ծնողի իրավունքներն ու պարտականությունները: | 1 | 2 | Փոխանցել սովորողի, մանկավարժական աշխատողի, ծնողի իրավունքներն ու պարտականությունները: |
| 2. | Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման սկզբունքները, հիմնական բաժիններին ընդհանրական ներկայացումը – 3 ժամ | Հանրակրթության մասին օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ կետը, 6-րդ հոդվածը:<br>Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգը:<br>Չափորոշիչի ձևավորման սկզբունքները:<br>Չափորոշիչի բաժինները: | 1 | 2 | Ուսումնասիրել հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման սկզբունքները, հիմնական բաժինները: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման, կամավոր ատեստավորման և տարակարգի շնորհման հիմնական գործընթացները – 2 ժամ | Պատրաստվում եմ հերթական ատեստավորման. օրենքի հոդված 26, Պատրաստվում եմ կամավոր ատեստավորման, օրենքի հոդված 26, Պատրատվում եմ տարակարգ ստանալու, օրենքի հոդված 26, ուսուցչի որակավորման տարակրագերի բնութագրիչները: | | 2 | Ծանոթացնել ուսուցչի կամավոր ատեստավորման և տարակարգի շնորհման հիմնական գործընթացներին: |
| 4. | Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնական անվանացանկը և պաշտոնային պարտականություննե րը – 2 ժամ | ՀՀ կառավարության 2010թ. 1391 որոշումով սահմանված ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնական անվանացանկը և պաշտոնային նկարագրերը: | 1 | 1 | Ծանոթացնել մանկավարժական աշխատողների պաշտոնական պարտականություններին: |
| 5. | «Հանրակրթական բնագավառի օրենսդրություն» բաժնի ամփոփում ժամ | | | | Բաժնի վերաբերյալ աշխատանքային փաթեթի հրապարակում բլոգում: Ամբողջական աշխատանքը գնահատվում է 1 կրեդիտ: |

**Բաժնի ուսումնասիրության վերջնարդյունքները**

Ուսուցիչը կիմանա՝

- Հանրակրթական ուսումնայան հաստատությունում կրթական գործընթացի մասնակիցների իրավունքները և օարտականությունները:
- Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման սկզբունքները, հիմնական բաժինները:
- Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի  ատեստավորման, կամավոր ատեստավորման և տարակարգի շնորհման հիմնական գործընթացները:
- Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնական անվանացանկը և պաշտոնային պարտականությունները

**Ուսուցիչը կկարողանա՝**

- պաշտպանել իր և սովորողների իրավունքները:
- ներկայացնել հանրակրթության պետական չափորոշչի կառուցվածքային գլխավոր բաղադրիչները և դրանց միջև առկա փոխադարձ կապերը:
- ներկայացնել ատեստավորման և տարակարգի շնորհման հիմնական գործընթացները:
- ներկայացնել ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականությունները:

**Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումն ուսումնական գործընթացում – 20 ժամ**

*(Վերապատրաստվողները չունեն ՏՀՏ անհրաժեշտ նախնական գիտելիքներ)*

| | Թեմաները | Բովանդակությունը, ենթաթեմաները: | Ժամաքանակը՝ ըստ պարապմունքների տեսակի | | Թեմայի նպատակը |
|---|---|---|---|---|---|
| | | | Տե սական | Գործ նական | |
| 1 | Էլեկտրոնային փոստի ստեղծում և վարում – 5 ժամ | Էլեկտրոնային փոստի ստեղծում, նամակի գրագետ կազմում, առաջնային և երկրորդական հասցեատերերի ընտրություն, վերնագրի և բովանդակության կազմում, ֆայլերի կցում, նամակի վերահասցեավորում, որոնում: | 1 | 4 | Կիրառել էլ. Փոստը ուսումնական գործընթացը կազմակերպելիս: |
| 2. | Ամպային տեխնոլոգիաների գործիքակազմ – 5 ժամ | Ամպային տարածքում թղթապանակների, փաստաթղթերի, էլեկտրոնային աղյուսակների, շնորհանդեսների, ցուցադրությունների ստեղծում, կիսման հղումների տրամադրում, կիսվում առանձնահատկությունների գործարկում, համօգտագործման հղման | 1 | 4 | Ամպային տարածքների գործարկում ուսուցման գործընթացը կազմակերպելիս: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | տրամադրում, ընդհանուր կարգավորումներ: | | | |
| 3. | Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ, Էլեկտրոնային մատյան- 5 ժամ | Էլեկտրոնային մատյանների առավելությունները, գործածման հմտությունները, դժվարությունները: Էլեկտրոնային մատյանի լրացում: | 1 | 4 | Տիրապետել էլեկտրոնային մատենավարության հմտություններին: |
| 4. | Կրթական կայքերի էությունը, օգտագործման առանձնահատկությունները, ընձեռած հնարավորությունները – 5 ժամ | ԿԳՄՍՆ կայքի, ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանի, ԿԶՆԱԿ-ի բլոգի ուսումնասիրություններ, ընձեռած հնարավորությունների և պաշարների գործածում, տեղեկատվության ստացման համար գրանցումներ, կրթական կայքերի որոնումներ, գրանցում կրթական ֆորումներում, անհրաժեշտ տեղեկատվության որոնում, արժեհավատության գնահատում: | 2 | 5 | Օգտվել կրթական կայքերից, դրանք օգտագործել ուսւոմնական գործընթացում: |
| 5 | «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում» բաժնի ամփոփում | | | | Բաժնի վերաբերյալ աշխատանքային փաթեթի հրապարակում բլոգում: Ամբողջական աշխատանքը գնահատվում է 1 կրեդիտ: |

**Բաժնի ուսումնասիրության վերջնարդյունքները.**

Ուսուցիչը կկարողանա.

- ուսուցման կառավարման համակարգում ստեղծել դասարան, ընդգրկել աշակերտներ, տալ հանձնարարություններ, կատարել գրառումներ, վերբեռնել ֆայլեր, համօգտագործել ֆայլեր, ստեղծել թվային առաջադրանքներ և գնահատման ռուբրիկներ, կազմակերպել համաժամանակյա հանդիպումներ, օգտվել օրացույցից
- լրացնել էլեկտրոնային մատյանը
- կիրառել առցանց գրատախտակի գործիքակազմը, կիսել և համօգտագործել այն
- օգտվել ԿԳՄՍՆ կայքից, ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանից, ԿԶՆԱԿ-ի բլոգից,
- գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, գրանցվել հայկական կրթական ֆորումում,
- վերբեռնել ֆայլեր, օգտվել առցանց կրթական կայքերի գործիքներից, դրանց միջոցով կազմակերպել ուսումնական գործընթացը, ստեղծել թվային առցանց առաջադրանքներ, շնորհանդեսներ, տեսանյութեր, խմբագրել կիսել և համօգտագործել դրանք:

**Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումն ուսումնական գործընթացում – 20 ժամ**

*(Վերապատրաստվողներն ունեն ՏՀՏ անհրաժեշտ նախնական գիտելիքներ)*

| | Թեմաները | Բովանդակությունը, ենթաթեմաները | Ժամաքանակը՝ ըստ պարապմունքների տեսակի | | Թեմայի նպատակը |
|---|---|---|---|---|---|
| | | | Տե սական | Գործ նական | |
| 1 | Ուսուցման կառավարման համակարգերի (LMS) ֆունկցիոնալ հնարավորությունները և այդ միջավայրի կիրառումը էլեկտրոնային դասընթացի ստեղծման, | Ուսուցման կառավարման համակարգերում դասարանների-խմբերի ստեղծում, սովորողների ընդգրկում, հանձնարարությունների և առաջադրանքների ստեղծում, ինքնաստուգման առաջադրանքների կազմում | 1 | 4 | Ծանոթացնել ուսուցման կառավարման համակարգերին, դրանց հնարավորություններին: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կազմակերպման և կառավարման գործընթացում – 5 ժամ | ֆայլերի ներբեռնում, համօգտագործվող ֆայլերի թույտվությունների տրամադրում, հանդիպումների կազմակերպում, ներառում օրացույցում, հանդիպման հղման տրամադրում: | | | |
| 2. | Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ, Էլեկտրոնային մատյան 5 ժամ | Էլեկտրոնային մատյանների առավելությունները, գործածման հմտությունները, դժվարությունները: Էլեկտրոնային մատյանի լրացում: | 1 | 4 | Փոխանցել Էլեկտրոնային մատենավարության հմտություններ: |
| 3. | Թվային առաջադրանքների ստեղծումը ուսուցման կառավարման համակարգերի թվային գործիքների միջոցով – 5 ժամ | Թվային առցանց առաջադրանքների, ցուցադրությունների, շնորհանդեսների ստեղծում, հղումների տրամադրում, համօգտագործման թույտվությունների տրամադրում, տեսանյութերի և ձայնանյութերի ստեղծում: | | 5 | Փոխանցել թվային առաջադրանքնր ստեղծելու գործիքաշար և հմտություններ: |
| 4. | Առցանց գրատախտակի գործիքակազմը – 3 ժամ | Առցանց գրատախտակի հնարավորությունների ուսումնասիրություն, գործիքակազմի կիրառում, համօգտագործման թույտվություն, հղման տրամադրում: | | 3 | Ծանոթացնել առցանց գրատախտակի գործառույթներին: |
| 5 | Կրթական կայքերի էությունը, օգտագործման առանձնահատկություննները, ընձեռած | ԿԳՄՍՆ կայքի, ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանի, ԿԶՆԱԿ-ի բլոգի ուսումնասիրություններ, ընձեռած հնարավորությունների և պաշարների գործածում, | 1 | 1 | Ծանոթացնել կրթական կայքերին, դրանց առանձնահատկություններին: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | հնարավորությունները - 2 ժամ | տեղեկատվության ստացման համար գրանցումներ, կրթական կայքերի որոնումներ, գրանցում կրթական ֆորումներում, անհրաժեշտ տեղեկատվության որոնում, արժեհավատության գնահատում: | | | |
| 6 | «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում» բաժնի ամփոփում | | | | Բաժնի վերաբերյալ աշխատանքային փաթեթի հրապարակում բլոգում: Ամբողջական աշխատանքը գնահատվում է 1 կրեդիտ: |

**Բաժնի ուսումնասիրության վերջնարդյունքները.**

Ուսուցիչը կկարողանա.

- լրացնել էլեկտրոնային մատյանը
- ստեղծել էլեկտրոնային փոստ, գրել նամակ, ճիշտ ձևակերպել վերնագիրը և բովանդակությունը, կցել ֆայլեր, պատասխանել նամակին, վերահասցեավորել նամակը, գտնել նամակը փոստի մեջ, գտնել ուղարկած նամակը
- ամպային տարածքում ստեղծել թղթապանակներ, փաստաթղթեր, էլեկտրոնայնին աղյուսակներ, շնորհանդեսներ, կիսել և համօգտագործել դրանք, կարգավորել համօգտագործման հնարավորությունները
- օգտվել ԿԳՄՍՆ կայքից, ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանից, ԿՀՆԱԿ-ի բլոգից, գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, գրանցվել հայկական կրթական ֆորումում, վերբեռնել ֆայլեր
- օգտվել առցանց կրթական կայքերի գործիքներից, դրանց միջոցով կազմակերպել իրուսումնական գործընթացը, ստեղծել թվային առցանց առաջադրանքներ, շնորհանդեսներ, տեսանյութեր, խմբագրել կիսել և համօգտագործել դրանք:

**Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումն ուսումնական գործընթացում – 20 ժամ**

*(Վերապատրաստվողներն չունեն ՏՀՏ բավարար նախնական գիտելիքներ)*

| | Թեմաները | Բովանդակությունը, ենթաթեմաները | Ժամաքանակը` ըստ պարապմունքների տեսակի | | Ինքնուրույն, արտալսարանային |
|---|---|---|---|---|---|
| | | | Տեսական | Գործնական | |
| 1 | Տեքստային խմբագրիչի գործիքակազմը – 4 ժամ | Տեքստի կազմում, ձևավորում, աղյուսակների ստեղծում, սիմվոլների ներմուծում, տեքստի մեջ որոնումներ, փոխարինումներ, ավտոմատ ցանկերի ստեղծում: | | 4 | Ծանոթացնել տեքստային խմբագրիչին, փոխանցել պարզագույն աշխատանքային հմտություններ: |
| 2. | Շնորհանդեսների ստեղծում և խմբագրում – 4 ժամ | Շնորհանդեսների, ցուցադրությունների ստեղծում, ձևավորում, նկարների, նկարաշարերի, սիմվոլների, տեքստերի տեղադրում, հիպերհղումների ստեղծում, անիմացիաների, շարժական պատկերների ստեղծում, ակտիվ կոճակների գործարկում: | 1 | 3 | Ծանոթացնել շնորհանդեսներ ստեղծելու ծրագրերից մեկին, փոխանցել պարզագույն աշխատանքային հմտություններ: |
| 3. | Էլեկտրոնային փոստի ստեղծում և վարում- 4 ժամ | Էլեկտրոնային փոստի ստեղծում, նամակի գրագետ կազմում, առաջնային և երկրորդական հասցեատերերի ընտրություն, վերնագրի և բովանդակության կազմում, ֆայլերի | 1 | 3 | Փոխանցել էլեկտրոնային նակակագրության հմտություններ: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կցում, նամակի վերահասցեավորում, որոնում: | | | |
| 4. | Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ, Էլեկտրոյաին մատյան – 5 ժամ | Էլեկտրոնային մատյանների առավելությունները, գործածման հմտությունները, դժվարությունները: Էլեկտրոնային մատյանի լրացում: | 1 | 4 | Փոխանցել էլեկտրոնային մատենավարության հմտություններ: |
| 5 | Կրթական կայքերը, օգտագործման առանձնահատկություններ, ընձեռած հնարավորությունները – 3 ժամ | ԿԳՄՍՆ կայքի, ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանի, ԿԶՆԱԿ-ի բլոգի ուսումնասիրություններ, ընձեռած հնարավորությունների և պաշարների գործածում, տեղեկատվության ստացման համար գրանցումներ, կրթական կայքերի որոնումներ, գրանցում կրթական ֆորումներում, անհրաժեշտ տեղեկատվության որոնում, արժեհավատության գնահատում: | | 3 | Ծանոթացնել կրթական կայքերին, դրանց առանձնահատկություններին: |
| 6 | «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում» բաժնի ամփոփում – 1 ժամ | Անցածի կրկնություն | | | Բաժնի վերաբերյալ աշխատանքային փաթեթի հրապարակում բլոգում: Ամբողջական աշխատանքը գնահատվում է 1 կրեդիտ: Կրկնել, ամրապնդել անցած նյութը: |

**Բաժնի ուսումնասիրության վերջնարդյունքները.**

Ուսուցիչը կկարողանա.

- լրացնել էլեկտրոնային մատյանը
- տեքստային խմբագրիչում հավաքել և ձևավորել տեքստեր, ստեղծել աղյուսակներ, փնտրել և փոխարինել տեքստը, ստեղծել ավտոմատ ցանկեր

- ստեղծել շնորհանդեսներ, ձևավորել դրանք, տեղադրել նկարներ և տեքստեր, ստեղծել հիպերհղումներ, անիմացիաներ, ստեղծել ցանկացած ուղղությամբ անիմացիոն շարժում, տեղադրել գործողության (Action Buttons) կոճակներ
- օգտվել առցանց կրթական կայքերի գործիքներից, դրանց միջոցով կազմակերպել ուսումնական գործընթացը
- օգտվել պաշարների շտեմարանից և ԿԶՆԱԿ-ի բլոգից, գտնել անհրաժեշտ ինֆորմացիան:

**Դիրքորոշում և արժեք – 10 ժամ**

| | Թեմաները | Բովանդակությունը, ենթաթեմաները | Ժամաքանակը՝ ըստ պարապմունքների տեսակի | | Թեմայի նպատակը |
|---|---|---|---|---|---|
| | | | Տե սական | Գործ նական | |
| 1 | Ժողովրդավարական մշակույթի կարողունակությունների «դիրքորոշում» և «արժեք» բաղադրիչները – 5 ժամ | Ժողովրդավարական մշակույթի կարողունակությունների «դիրքորոշում» և «արժեք» բաղադրիչներ:<br><br>Արժեքներ՝ ժողովրդավարություն, օրենքի և իրավունքի գերակայություն, արդարություն:<br><br>Վերաբերմունք՝ անկանխակալ մոտեցում այլ մշակույթների նկատմամբ, քաղաքացիական դիրքորոշում, պատասխանատվություն, հանդուժողականություն: | 1 | 4 | Ծանոթացնել Ժողովրդավարական մշակույթի կարողունակությունների «դիրքորոշում» և «արժեք» բաղադրիչներին: |
| 2. | Ուսումնական գործընթացում վերաբերմունքի և արժեքների | Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված սովորողների դիրքորոշման ու արժեքային համակարգի | 1 | 4 | Ծանոթանալ, քննարկել հանրակրթության պետական չափորոշչով սահմանված սովորողների դիրքորոշման ու |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ձևավորման հիմունքները – 5 ժամ | ձևավորմանն ուղղված վերջնարդյունքները:<br><br>Սովորողների դիրքորոշման գործունեության տեսակներ:<br><br>Սովորողների դիրքորոշման և արժեքների ձևավորմանն ուղղված դասերի պլանավորում:<br><br>Դասավանդման արդյունավետ մեթոդներ:<br><br>Սովորողների դիրքորոշման ու արժեքների ձևավորմանն ուղղված գործունեություն: | | | արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված վերջնարդյունքները: |
| 3. | «Դիրքորոշում և արժեք» բաժնի ամփոփում | | | | Բաժնի վերաբերյալ աշխատանքային փաթեթի հրապարակում բլոգում: Ամբողջական աշխատանքը գնահատվում է 1 կրեդիտ: |

Բաժնի ուսումնառության վերջնարդյունքները

Ուսուցիչը կիմանա՝

- Ժողովրդավարական մշակույթի կարողունակությունները:
- Ժողովրդավարական մշակույթի «դիրքորոշում» և «արժեք» բաղադրիչները:
- Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված սովորողների դիրքորոշումների և արժեքների ձևավորման ուղղված վերջնարդյունքները՝ ըստ դպրոցների աստիճանների:

ՈՒսուցիչը կկարողանա՝

- Համեմատել, վերլուծել, համադրել «արժեքներ», «վերաբերմունք» հասկացությունները, դրանք հասանելի դարձնել սովորողին:
- Սեփական վարքով օրինակ ծառայել սովորողներին ժողովրդավարական մշակույթի կարողունակությունների հիմնավոր ընկալման համար:
- Արժևորել և գիտակցել ժոմովրդավարական մշակույթի ձևավորման արժեքների դերը առարկան ուսուցանելիս, արժեքն ու գիտակցումը փոխանցել սովորողին:
- Ժողովրդավարական մշակույթի արժեքների և վերաբերմունքի բաղադրիչները կիրառել դասապլաններ կազմելիս:
- Կիրառել ուսումնական գործունեության տարբեր տեսակներ, ուսուցման արդյունավետ մեթոդներ արժեքների և վերաբերմունքի ձևավորման նպատակով:
- Նպաստել իրավահավասարության, մարդասիրության, արդարության մթնոլորտի ձևավորմանը դասապրոցեսում:

## Տարիքային հոգեբանություն – 10 ժամ

| | Թեմաները | Բովանդակությունը, ենթաթեմաները | Ժամաքանակը՝ ըստ պարապմունքների տեսակի | | Թեմայի նպատակը |
|---|---|---|---|---|---|
| | | | Տեսական | Գործնական | |
| 1 | Սովորողի հոգեկան զարգացման առանձնահատկությունները տարիքային տարբեր շրջաններում – 3 ժամ | Սովորողի հոգեկան զարգացումը, առանձնահատկությունները, ճգնաժամերը՝<br>Կրտսեր դպրոցում<br>Միջին դպրոցում<br>Ավագ դպրցում | 1 | 2 | Ծանոթացնել երեխայի տարիքային ճգնաժամային փուլերին, դրանց առանձնահատկություններին: |
| 2. | Ուսումնական հետաքրքրություններ – 2 ժամ | Սովորողի ուսումնական հետաքրքրությունների ձևավորման և զարգացման առանձնահատկությունները | 1 | 1 | Քննարկել ուսումնական հետաքրքրությունների ձևավորման և զարգացման առանձնահատկությունները |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կրտսեր, միջին, ավագ դպրոցականների շրջանում Հետաքրքրությունների խթանման, զարգացման ուղիներն ու առանձնահատկությունները | | | կրթական տարբեր աստիճաններում:<br><br>Ծանոթացնել հետաքրքրությունների խթանման ուղիներին, դրանց առանձնահատկությունները; |
| 3. | Ուսումնառության ոճեր – 2 ժամ | Ուսումնական ոճերի տեսակներն ըստ սովորողի նախասիրության՝ ակտիվ, ռեֆլեկտիվ, պրագմատիկ/գործնական/, տեսական<br><br>Ուսուցանելու ոճերի տեսակները՝ տեսողական, լսողական, գրելու-կարդալու, բոլորը մեկում<br><br>Դրանց արդյունավետ կիրառումը ուսումնառության գործընթացում | 1 | 1 | Ծանոթանցնել ուսումնական ոճերի տեսակներին:<br><br>Ծանոթացնել ուսուցանելու ոճերին:<br><br>Փոխանցել ուսուցանելու ոճերի արդյունավետ կիրառման հմտություններ: |
| 4. | Արդյունավետ կառավարում և հաղորդակցում - 2 ժամ | Դասարանի արդյունավետ կառավարման վարքի ձևեր<br>Սովորողների հետ արդյունավետ հաղորդակցման ձևեր<br>Կոնֆլիկտների կարգավորման փուլերը<br>Կոնֆլիկտի հաղթահարում | 1 | 2 | Ներկայացնել, քննարկել դասարանի արդյունավետ կառավարման վարքի, հաղորդակցման ձևերին, կոնֆլիկտների կարգավորման և հաղթահարման փուլերին, եղանակներին: |
| 5. | «Տարիքային հոգեբանություն» բաժնի ամփոփում | | | 1 | Բաժնի վերաբերյալ աշխատանքային փաթեթի հրապարակում բլոգում: Ամբողջական աշխատանքը գնահատվում է 1 կրեդիտ: |

**Բաժնի ուսումնառության վերջնարդյունքները.**
Ուսուցիչը կկարողանա՝

- Բնութագրել սովորողի հոգեկան զարգացումը տարբեր տարիքային փուլերում
- Հաշվի առնելով սովորողների առանձնահատկություններն ու ճգնաժամային փուլերը կազմակերպել դասապրոցեսը
- Ներկայացնել սովորողների հետաքրքրությունների ձևավորման առանձնահատկությունները տարբեր տարիքային շրջաններում
- Տարբեր մեթոդներով բացահայտել և զարգացնել սովորողների հետաքրքրությունները
- Ուսումնառության գործընթացում արդյունավետ կիրառել սովորողների ուսումնառության ոճերի մասին գիտելիքը
- Արդյունավետ հաղորդակցվել սովորողների հետ
- Դասարանում պահպանել դրական մթնոլորտ
- Կարգավորել կոնֆլիկտային իրավիճակները

**Համընդհանուր ներառում – 10 ժամ**

| | Թեմաները | Բովանդակությունը, ենթաթեմաները | Ժամաքանակը՝ ըստ պարապմունքների տեսակի | | Թեմայի նպատակը |
|---|---|---|---|---|---|
| | | | Տեսական | Գործնական | |
| 1 | Ներառական կրթության փաստահենք ընկալում: Ներառական կրթության իրավական կարգավորումներ – 2 ժամ | Ներառական կրթությունը <<Մխիթար Սեբաստացի>>կրթահամալիրում . նկարագրությունը, առանձնահատկությունները, կազմակերպումը | 1 | 1 | Ծանոթացնել կրթահամալիրի փորձին: |
| 2. | Երեխաների կրթական կարիքների բազմազանությունը: Սովորողների | Սովորողներ կրթական կարիքները, բազմազանության տեսակները, հաճախ հանդիպող կրթական կարիքների առանձնահատկությունները: | 1 | 1 | Ծանոթացնել սովորողների կրթական կարքիներին, դրանց |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կրթական կարիքների բացահայտում և գնահատում – 2 ժամ | | | | առանձնահատկություններին : |
| 3. | Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ՝ դպրոցական, տարածքային և հանրապետական մակարդակներ - 2 ժամ | Դպրոցական մակարդակի գնահատման գործիքակազմ | 1 | 1 | Ծանոթանցել դպրոցական մակարդակի գնահատման գործիքակազմին: |
| 4. | Ներառող դասավանդում. Ռազմավարություններ, մեթոդներ, մոտեցումներ – 1 ժամ | Սովորողների ուսումնառություն ոճերը և ռազմավարությունները: Ուսումնառության հանընդհանուր ձևավորում (ՈւՀՁ), ներառող դասավանդում: | | 1 | Ծանոթանցել ուսումնասության ոճերին և ռազմավարությանը, ՈւՀՁ , ներառող դասավանդման մոտեցումներին: ներկայացնել կրթահամալիրի փորձը: |
| 5 | Կրթական ծրագրերի հարմարեցումներ, տարբերակված ուսուցում, անհատական ուսուցման պլանավորում – 1 ժամ | Կրթահիան ծրագրերի հարմարեցումները, առանձնահատկությունները <<Մխիթար Սեբաստացի>> կրթահամալիրում Անհատական ուսուցման պլամ (ԱՈւՊ), ուսուցման պլանավորում՝ օրինակելի ձև և կրթահամալիրային առանձնահատկություններ | | 1 | Ներկայացնել կրթահամալիրի փորձը: Քննարկել ԱՈւՊ-ի օրինակելի ձևը և կրթահամալիրում ստեղծված նմուշները: Նշել դրանց առանձնահատկությունները: Անել առաջարկներ: |
| 6 | Համագործակցությունն ու փոխհարաբերությունները ներառական կրթության համատեքստում - 1 ժամ | Սովորող-սովորեցնող նախագիծ<br>Ուսումնական ճամփորդություններ<br>Ուսումնական ճամբարներ<br>Խմբային աշխատանքներ<br>Համագործակցային նախագծեր<br>Ընտանեկան նախագծեր | | 1 | Ծանոթանալ կրթահամալիրի փորձին. հատուկ կարիքով սովորողների մանսակցությունը ուսումնական նախագծերին, այդ թվում՝ ճամփորդություններին: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Իրավիճակների լուծումներ (ինքնուրույն աշխատանք) – 1 ժամ | Ուսումնական նյութեր, ուսումնական նյութերին ներկայացվող պահանջներ Ինքնակրթություն | | 1 | Ծանոթանալ կրթահամալիրի մեդագրադարանում հրապարակված ուսումնական նյութերի փաթեթներին: |
| 8 | «Հանընդհանուր ներառում» բաժնի ամփոփում | | | | Բաժնի վերաբերյալ աշխատանքային փաթեթի հրապարակում բլոգում: Ամբողջական աշխատանքը գնահատվում է 1 կրեդիտ: |

Ուսումնառության վերջնարդյունքները

1) Ուսուցիչը կկարողանա՝

- մեկնաբանել ներառական կրթության կարևորությունը մարդու իրավունքների տեսանկյունից,
- թվարկել ներառական կրթության դրական կողմերը և հիմնական սկզբունքները, գ) ներկայացնել ներառական կրթության համատեքստում ընդունելի բառապաշարը, դ) թվարկել ներառական կրթության կազմակերպումը կարգավորող իրավական ակտերի հիմնական դրույթները,
- ընդունել և արժևորել սովորողների բազմազանությունը,
- համարել սովորողների տարբերությունը որպես ռեսուրս և արժեք,
- թվարկել ներառական կրթության համատեքստում հաճախ հանդիպող բազմազանության տեսակները,
- ճանաչել հաճախ հանդիպող կրթական կարիքների առանձնահատկությունները, թ) բացահայտել և ճանաչել սովորողների կրթական կարիքները,
- վերհանել կրթության գործընթացում երեխայի լիարժեք մասնակցության սահմանափակումները և դրանց հաղթահարմանը խթանող գործոնները,
- կիրառել դպրոցական մակարդակի գնահատման գործիքակազմը,
- ներկայացնել «ՀՀ–ում կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման եռաստիճան համակարգը,
- տարբերակել դպրոցական, տարածքային և հանրապետական մակարդակներում կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման գործընթացները,
- սահմանել երեխային, ծնողին, մանկավարժին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տեսակները,

- ճանաչել սովորողների ուսումնառության ոճերը և կիրառել համապատասխան ռազմավարություններ,

- ընտրել ու կիրառել դասավանդման համապատասխան մեթոդներ և ռազմավարություններ՝ ելնելով սովորողների կրթական կարիքներից ու առանձնահատկություններից,
- կիրառել դասավանդման Ուսումնառության համընդհանուր ձևավորման մոտեցումները,
- կիրառել սովորողների ներգրավման բազմազանության ձևեր,
- պլանավորել դասն այնպես, որ բոլոր սովորողները դասի տարբեր փուլերում մասնակցություն ունենան,
- իրականացնել համատեղ դասավանդում,
- թվարկել համատեղ դասավանդման մոդելները, բաղադրիչները, ինչպես նաև ներկայացնել արդյունավետ համատեղ դասավանդման քայլերը,
- սահմանել Անհատական ուսուցման պլան հասկացությունը (այսուհետ՝ ԱՈւՊ),
- նկարագրել, թե ինչպիսի հարմարեցումներ են անհրաժեշտ կրթության առանձնահատուկ
պայմանների կարիք ունեցող սովորողի ուսուցման գործընթացը արդյունավետ
կազմակերպելու համար,
- կատարել հանրակրթական առարկայական ծրագրերի հարմարեցումներ ըստ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի,
- նկարագրել սովորողի ԱՈՒ-Պ-ի մշակման գործընթացի հիմնական քայլերը,
- սահմանել երեխայի անհատական կրթական նպատակներ,
- մեկնաբանել ուսուցիչ-ծնող-մասնագետ համագործակցության կարևորությունը,
- ճշել կրթության գործընթացի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասնակիցների համագործակցության շրջանակը,
- թվարկել ուսուցիչների աջակցող մասնւսգետների, ընտւսնիքների անդամների ու երեխայի կրթության հետ առնչվող այլ շահառուների հետ՝ երեխաների արդյունավետ ուսումնառության խոչընդոտները հաղթահարելու համագործակցության ուղղիներ,
- ներկայացնել ընտանիքին երեխայի ուսումնառության հարցերում ակտիվ ներգրավելու ռազմավարություններ:

## Գնահատում – 15 ժամ

| | Թեմաները | Բովանդակություն | Ժամաքանակը՝ ըստ պարապմունքների տեսակի | | Թեմայի նպատակը |
|---|---|---|---|---|---|
| | | | Տեսական | գործնական | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գնահատումը նորմատիվ փաստաթղթերում – 3 ժամ | *հանրակրթության մասին ՀՀ օրենք, հոդված 18 1,2 կետերմ հոդված 27, կետ 7:<br>*հանրակրթության պետական չափորոշիչ, VI, IX բաժիններ | 1 | 2 | Ծանոթանալ նորմատիվ փաստաթղթերում սովորողի ուսումնառության արդյունքների գնահատմանը վերաբերող հատվածներին: |
| 2. | Գնահատման գործընթաց – 3 ժամ | *գնահատման գործընթացի գործառույթներ:<br>*գնահատման գործընթացի սկզբունքներ: | | 3 | Ձևակերպել գնահատման գործընթացի գործառույթները:<br>Ձևակերպել գնահատման գործընթացի սկզբունքները: |
| 3. | Գնահատումը հանրակրթության պետական չափորոշչում – 3 ժամ | Հանրակրթական ուսումնական հաստատությունում ընթացիկ գնահատումը: | 1 | 2 | Ծանոթացնել  բանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) ձևերին: |
| 4. | Գնահատումը հանրակրթության պետական չափորոշչում, նիշային գնահատում, ուսումնական առաջադիմության բնութագիր – 2 ժամ | Նիշային գնահատում:<br>Ուսումնական առաջադիմության բնութագիր: | 1 | 1 | Ծանոթանալ նիշային գնահատման և առաջադիմության բնութագրի առանձնահատկություններին: |
| 5. | Ուսումնական նախագծի գնահատում  - 2 ժամ | Ուսումնական նախագծի կառուցվածքը, բաղադրիչները: | 1 | 1 | Ծանոթացնել ուսումնական նախագծի կառուցվածքին, բաղադրիչներին: |
| 6. | Ուսումնական բլոգը՝ գնահատման գործիք – 2 ժամ | Սովորողի ուսումնական բլոգը որպես սովորողի ուսումնական գործունեության արդյունքների գնահատման գործիք, ուսումնական բլոգին ներկայացվող պահանջներ: | 1 | 1 | Ներկայացնել կրթահամալիրի փորձը: |
| 7. | «Գնահատում» բաժնի ամփոփում | | | | Բաժնի վերաբերյալ աշխատանքային փաթեթի հրապարակում բլոգում:<br>Ամբողջական աշխատանքը գնահատվում է 1 կրեդիտ: |